

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԵԴԻԱՆ ՈՐՊԵՍ ԼԵԶՎԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԵԶՎԱԿԱՆ ՇԵՂՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՔ*

Գևորգ Գրիգորյան
*Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական
լեզվահասարակագիտական համալսարան*

Սույն հոդվածը նվիրված է ժամանակակից անգլալեզու սոցիալական մեդիայում անձնական և անդրադարձ դերանունների տարատեսակների ուսումնասիրությանն առջանց հաղորդակցման լեզվի տարբեր մակարդակներում՝ շարահյուսական, ձևաբանական, ուղղագրական և այլն:

Առջանց հաղորդակցման հարթակում օգտատերերը հաճախակի են կիրառում անձնական և անդրադարձ դերանունների նոր տարբերակները, որոնց առաջացումը պայմանավորված է մի շարք ներլեզվական և արտալեզվական գործոններով, մասնավորապես լեզվական միավորների տնտեսմամբ, լեզվական ինտերֆերենցիայով և հարակից լեզուների ազդեցությամբ: Այս գործոնները միտված են ընդլայնելու անձնական և անդրադարձ դերանունների կիրառության շրջանակը՝ միաժամանակ լեզուն ուղղորդելով կառուցվածքային պարզեցման:

Բանալի բառեր. լեզվի փոփոխություն, լեզվական շեղումներ, լեզվական էրգոնոմիա, լեզվական փոփոխակներ:

Ներածություն

Մարդկության զարգացման ողջ ընթացքում հաղորդակցությունը մշտապես կարևոր նշանակություն է ունեցել: Մարդկանց համակողմանի փոխըմբռնումն անհնար է պատկերացնել առանց հաղորդակցման գործընթացի: Այն հասարակական հարաբերությունների դրսևորման կարևորագույն մաս է կազմում:

Ժամանակի ընթացքում հաղորդակցման հիմնական միջոց համարվող մարդկային լեզուն մի կողմից դրսևորում է հարաբերական կայունություն, իսկ մյուս կողմից անընդհատ փոփոխությունների է ենթարկվում, ինչի արդյունքում լեզվի կառուցվածքային բոլոր մակարդակներում (ձևաբանական, ուղղագրական, շարահյուսական, և այլն) նոր այլընտրանքային շեղումներ (linguistic variations) են առաջանում, որոնք ժամանակին զուգընթաց լեզվից դուրս են մղում լեզվի համաժամանակյա փուլում առկա լեզվական նորմերը: Այդ փոփոխությունները պայմանավորված են մի շարք ներլեզվական և արտալեզվական գործոններով: Հարկ է նշել, որ լեզվական այդ շեղումների առաջացումը պայմանավորված է առջանց հաղորդակցման գործընթացն ավելի դյուրին դարձնելու գործառնությամբ:

Լեզվի զարգացման և փոփոխման արդյունքում ձևավորվում են փոփոխակներ, որոնք ժամանակի ընթացքում փոխում են լեզուն: Փոփոխակը՝ որպես լեզվական էվոլուցիայի առանցքային հատկանիշ, պահանջում է լեզվական համակարգի համալիր ուսումնասիրություն, որտեղ որևէ հայեցակետային կարող գերակա լինել:

* Հոդվածն ընդունվել է տպագրության 21.12.2016:

Լեզվի փոփոխության տարամետ տեսություններ

Լեզվի փոփոխության վերաբերյալ ուսումնասիրությունները սկսել են հայտնվել լեզվաբանների ուշադրության կենտրոնում 18-րդ դարի երկրորդ կեսից: Բազմաթիվ լեզվաբաններ սկսեցին ուսումնասիրել լեզուների փոփոխությունները, ինչպես Ֆ.Բոպպը (Comparative Grammar), Ջ. Գրիմը (German Grammar), Վ.Հումբոլդը (On Language, on the Diversity of Human Language Construction and its Influence on the Mental Development of the Human Species) և այլք: Սակայն սկզբնական շրջանում այդ ուսումնասիրությունները սահմանափակվում էին լեզուների տարժամանակյա ուսումնասիրությամբ: Հետագայում, երբ լեզուների պատմական զարգացման հետազոծող որոշակի չափով արդեն խարսխվել էր, բազմաթիվ լեզվաբաններ սկսեցին կատարել առկա լեզվական փոփոխությունների և փոփոխակների համաժամանակյա վերլուծություն (Վ. Լաբով՝ The Social Stratification of English in New York City, Principles of Language Change), Մ. Միլվերսոնսոն՝ Language and Culture of Gender: At the Intersection of Structure, Usage, and Ideology, Ջ. Միլրոյ և Լ. Միլրոյ՝ Linguistic Change, Social Network and Speaker Innovations և այլք):

Եթե կառուցվածքային լեզվաբանության ներկայացուցիչները լեզուն դիտարկում են որպես համաժամանակյա համասեռ կառուցվածքային ամբողջություն, իսկ դրանում առկա լեզվական շեղումները ոչ ցանկալի, ապա Ու. Վայնրայքը գտնում է, որ լեզուն տարասեռ ամբողջություն է, իսկ լեզվական շեղումները պետք է ունենան դինամիկ և պարտադիր բնույթ (տես Michael 2005):

Ըստ Ա. Մեիլեթի՝ լեզվական փոփոխությունները պայմանավորված են երեք գործոններով՝ 1) լեզվի բնականությամբ 2) տարածական, ժամանակային, սոցիալական և հոգեբանական գործոններով 3) այլ լեզուների ազդեցությամբ (տես Карташова 2011:1):

Փ. Թրաջիլը գտնում է, որ լեզուն ինքնակարգավորվող համակարգ է, և ոչ ոք չի կարող հսկողության տակ վերցնել կամ արգելափակել լեզվում առկա փոփոխությունները և շեղումները, քանի որ հասարակության խոսքում այդ շեղումները տեղի են ունենում ինքնաբերաբար: Ըստ նրա՝ մարդկային լեզվում առկա շեղումները պարտադիր են, հակառակ դեպքում կունենանք այնպիսի անփոփոխ լեզու, ինչպիսին է լատիներենը (Thrudgil 1999:2):

Ըստ Վ. Լաբովի՝ լեզվում առկա փոփոխակների առկայությունը պայմանավորված է սոցիալական դիրքի, որևէ էթնիկական, ռասսայական խմբի կամ տարածքային պատկանելիությունն արտահայտելու գործոններով: Հեղինակը փորձում է պարզել, որն է այն սոցիալական խթանը, որի օգնությամբ խոսողը լեզվական փոփոխակների շարքից ընտրում է մեկը: Օրինակ, Նյու Յորք քաղաքում բնակիչների կողմից [r] ~ [Ø] տարբերակներից առաջինը նախընտրելը պայմանավորված է հասարակության մեջ ցանկալի սոցիալական դիրք ունենալու հետ (տես Michael 2005:5):

20-րդ դարի երկրորդ կեսից լեզվաբաններն անհատի սեռական և տարիքային առանձնահատկությունները ևս սկսեցին դիտարկել որպես լեզվական շեղումների հիմք: Ըստ Ս. Ռանայի և Օ. Մոհի՝ կանանց կողմից ազդեցիկ տարբերակի ընտրությունը պայմանավորված է երեք հիմնական գործոններով՝

1) կանայք այդ տարբերակի կիրառումը սերտորեն կապում են ցանկալի սոցիալական դիրքի ընտրության հետ:

2) բազմաթիվ հասարակարգերում կանայք մեծամասամբ զբաղվում են երեխաների դաստիարակությամբ, հետևապես նրանց կողմից կիրառվող լեզուն ձևավորում է ապագա սերնդի խոսքը:

3) կանանց կողմից լեզվական շեղումների շարքից գրական տարբերակի ընտրությունը պայմանավորված է աշխատաշուկայում նրանց զբաղեցրած ուղորտներով՝ կրթություն, զբոսաշրջություն և այլն (Rana, Moh 2011:50-52):

Ի տարբերություն կանանց՝ տղամարդիկ հակված են ավելի շատ լեզվական շեղումներ կիրառելու՝ իրենց խմբային կամ տարածքային պատկանելիությունը ցուցաբերելու նպատակով: Միաժամանակ, կարևոր է նշել, որ տղամարդկանց կողմից լեզվական շեղումների լայն կիրառությունը պայմանավորված է նաև տարբեր հասարակարգերում տղամարդկանց կրթական ավելի ցածր մակարդակ պահանջող աշխատանքային ուղորտներում ներգրավվածությամբ:

Ինչ վերաբերում է տարիքին, ապա հանրալեզվաբաններն (Պ. Էկերթ, Ֆ. Բալդելինին) իրենց ուսումնասիրությունների արդյունքում եկան այն եզրակացության, որ փոփոխակների առաջացման հավանականությունը մեծ է կյանքի միջին փուլում, քանի որ վաղ հասակում անհատները սովորում են լեզուն, մինչդեռ ավելի հասուն տարիքում մարդիկ սկսում են կորցնել այն (Eckert 1998):

Լեզվում փոփոխակների առաջման վերաբերյալ առհասարակ այլ տեսակետ ունի Մ. Սիլվերստեյնը: Ըստ նրա՝ լեզվում առկա փոփոխակների առաջացումը պայմանավորված է գրուցակիցների տարբեր խոսքային իրադրություններում պատշաճ և արդյունավետ հաղորդակցվելու գործառնությամբ: Ավելին, լեզվաբանը իր *Գենդերային լեզուն և մշակույթը կառուցվածքի, կիրառության և գաղափարախոսության միախառնում* աշխատությունում ներկայացնում է լեզվական համապատասխանելիության նմանատիպ մի օրինակ՝ 17-18-րդ դարերի ընթացքում անգլերենում գոյություն ունեցող *դու* դերանվան համար կիրառվող երկու տարբերակների՝ *thee/thou* և *ye/you* վերաբերյալ: Այդ տարբերակներից առաջինը՝ *thee/thou* հիմնականում օգտագործվում էր առօրյա խոսքում իրենց սոցիալական դիրքին հավասարագոր մարդկանց հետ հաղորդակցվելիս, մինչդեռ *ye/you* ձևը՝ սոցիալապես ավելի բարձր դիրք ունեցող և ազդեցիկ մարդկանց հետ հաղորդակցվելիս՝ իրենց պատկառանքն արտահայտելու նպատակով (Silverstein 1985): Այսինքն, միևնույն քերականական ձևի, խոսքի մասի տարբերակները տվյալ ժամանակաշրջանում սոցիալական այս կամ այն դասին և խոսույթին համապատասխանելու բնույթ են ունեցել:

Միատեսակ լեզվական երևույթների մի քանի տարբերակների զուգահեռ կիրառումը լեզվաբանության մեջ հետազայում ձևավորեց մի նոր տեսություն՝ Հաղորդակցման համապատասխանելիության տեսությունը (Communication Accomodation Theory-CAT), համաձայն որի գրուցակիցները համատեղում են լեզվական տարբերակների ամբողջությունը և, ելնելով այս կամ այն լեզվական իրադրությունից, կատարում համապատասխան տարբերակի ընտրություն սոցիալական ներգրավվածության համար (Giles, Coupland 1991: 8):

Լեզվական շեղումները սոցիալական մեդիայում

20-րդ դարի վերջին տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների առաջընթացը ձևավորում է հաղորդակցական մի նոր միջավայր՝ այն է առցանց հաղորդակցումը սոցիալական մեդիայում:

Հաղորդակցական այս նոր միջավայրը հարաբերականորեն նոր երևույթ է, որի շնորհիվ միջանձնային և այլ տիպի շփումները ավելի հաճախակի բնույթ են ստանում և հիմնվում տեղեկատվության փոխանակման և շրջանառության սկզբունքի վրա:

Անգլերենը, կիրառվելով առցանց միջավայրում, որպես լինգուա ֆրանկա, մեծ ինտենսիվությամբ և հաճախականությամբ նպաստում է բազմաթիվ նոր լեզվական և լեզվագործաբանական երևույթների առաջացմանը, որոնք իրենց ազդեցությունն են ունենում, ինչպես գրավոր գիտական, այնպես էլ բանավոր խոսքի վրա: Այդ լեզվական երևույթների շարքում կարևոր տեղ է զբաղեցնում լեզվական փոփոխակների առաջացումը՝ կախված արտալեզվական մի շարք գործոններից, որոնց շարքում առաջատար կարելի է համարել ժամանակի տնտեսումը և տեղեկատվության էրգոնոմիան/տնտեսումը:

Եթե Ա. Մարտինեի բնորոշմամբ՝ լեզվական միավորների էրգոնոմիան մշտապես փոփոխվող հաղորդակցական պահանջմունքների և մարդկային անգործության ոչ կայուն հավասարակշռումն է (տես Vincentini 2003:39), ապա ըստ Ջ. Ջիպֆի՝ լեզվական միավորների էրգոնոմիան, ինչպես կյանքի մյուս բնագավառներում, այնպես էլ հաղորդակցման գործընթացում բնական է և հիմնված է *նվազագույն ջանք կիրառելու* սկզբունքի վրա (տես Vincentini 2003:39):

Ներկայումս, ժամանակակից անգլալեզու սոցիալական մեդիան գլոբալ հասարակության հաղորդակցման ամենամասսայական հարթակն է դարձել:

Առցանց հաղորդակցման ընթացքում գրուցակիցները, լեզվական միավորների տնտեսման շնորհիվ, հնարավորություն են ունենում ավելի շատ ժամանակ և էներգիա խնայել՝ միաժամանակ փոխանցելով տեղեկատվության առավելագույն ծավալ:

Այս համատեքստում կարևոր է նշել նաև այն, որ ժամանակակից անգլալեզու սոցիալական մեդիայի մի շարք հարթակներ իրենց կառուցվածքով և գործիքակազմով նույնպես նպաստում են լեզվական միավորների տնտեսմանը (օր.՝ թվիթերում (twitter) փոխանցվող հաղորդագրության սիմվոլների քանակը չպետք է գերազանցի հարյուր քառասունը):

Վերջին տարիներին առցանց միջավայրում լեզվական միավորների տնտեսման ինտենսիվ հաճախականությամբ կիրառումը նպաստել է նոր լեզվական երևույթների ձևավորմանը, մասնավորապես բառաձևերի կրճատման, պարզ կամ միավանկ բառերի մեկ տառով կամ թվով փոխարինման, կետադրական նշանների օգնությամբ գրաֆիկական նշանների, հուզանշանների և աքրոնիմների ձևավորմանը: Նոր տեխնիկական հնարավորությունների զարգացմանը զուգընթաց՝ այս լեզվական երևույթների ցանկը մշտապես համալրվելու է:

Առցանց հարթակում լեզվական նորմերի և լեզվական միավորների տնտեսման օրինակների զուգահեռ կիրառության արդյունքում՝ ժամանակակից անգլերենում զարգանում են նոր ձևաչափի լեզվական հարաբերություններ, որոնք ենթադրում են քերականական և շարահյուսական կարգերի, ձևերի որոշակի փոփոխություններ՝ պայմանավորված բանավոր խոսքի էական ազդեցությամբ գրավոր խոսքի վրա:

Լեզվական միավորների փոփոխությունների շարքում իրենց ուրույն տեղն ունեն դերանունները, քանի որ հարյուրամյակների ընթացքում դրանք շատ քիչ փոփոխությունների են ենթարկվել, բացառությամբ խոնարհման և վերջավոր-

րությունների անհետացման հետ կապված փոփոխությունների: Սակայն վերջին շրջանում զրուցակիցների կողմից դերանունների ակտիվ օգտագործումն առցանց լեզվի տարբեր մակարդակներում նպաստել է նաև դերանունների նոր զուգահեռ կիրառությունների ծնավորմանը:

Ուղղագրական շեղումներ

Ժամանակակից անգլալեզու սոցիալական մեդիայում առցանց հաղորդակցման լեզվի ակտիվ կիրառումը սերտորեն փոխկապակցված է լեզվական նշանային համակարգի արդյունավետ գործածության հետ:

Դ. Քրիսթլը լեզվական նշանային համակարգի արդյունավետ գործածումը համարում է 21-րդ դարին բնորոշ երևույթ, որն ունի իր առանձնահատուկ գրաֆիկական ոճը՝ հապավումներով և լեզվական շեղումների կիրառություններով լի: Ըստ նրա՝ այդ ոճը հիմնականում օգտագործվում է երիտասարդ սերնդի կողմից (Crystal 2008:7-8):

Առցանց հաղորդակցման հարթակում արագ պատասխանելու ժամանակային սահմանափակվածությունը մի կողմից, նվազագույն ջանք և էներգիա կիրառելու սկզբունքը մյուս կողմից, ստիպում են օգտատերերին առցանց հարթակում փնտրելու և ստեղծելու հաղորդագրություններն ավելի արագ և արդյունավետ փոխանցելու նորանոր ուղիներ:

Անգլալեզու սոցիալական մեդիայում, մեր կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքում, անհրաժեշտ ենք համարում առանձնացնել անձնական և անդրադարձ դերանունների ուղղագրության տնտեսման հետևյալ միջոցը՝ անդրադարձ հոգնակի դերանունների վերջավորությունների սղում.

*Nassau's fate will be forged in blood. Ready **yourself** for the final season of Black #!#!Nss!!!*

I love u today and i love u tomorrow and forever its our life..we have to

*love **ourself** ...GooD nIghT :)*

*If you know of a student who might be interested, please have them PM me a few sentences about **themself** and their learning goals.*
(Facebook.com)

Վերջին տարիների ընթացքում անգլալեզու սոցիալական մեդիայում օգտատերերի կողմից նկատվում է մի նոր լեզվական նորարարության միտում. և՛ եզակի, և՛ հոգնակի անդրադարձ դերանունների *self* արմատում / ձայնորդ բաղաձայնի սղում: Այս լեզվական նորարար միտումը առցանց հարթակում հիմնականում օգտագործվում է աֆրոամերիկացիների կողմից՝

*Awon omo offa. They too dey fil **themself**...stil doin association on ma bday*

*Ya Just love **yourself***

*Pushin **ourself** to de top wil help us active our dreams so brothers let do dat....#tv68*

*If You Do So, You Are Insulting **Yourself**. #iThankGodForMyLife*

*If some lady wuld access **themsef** very weel before posting a picture...*

*Don't Compare **Yoursef** With Anyone In This World,
What have we gotten **oursef** into....Ndi Ala.*

(Facebook.com)

Լ-ի կրճատունը պայմանավորված է նրանով, որ սխալ ուղղագրությամբ դերանունը սկսել է ինտենսիվ կիրառվել ոչ միայն առաջանց միջավայրում, այլև տարածում է ստացել դրա սահմաններից դուրս: Այսպես, կարելի հանդիպել հայտարարության հետևյալ բովանդակությամբ՝

*Litmus Paper Make It **Yoursef** Chemistry Kit for kids.*

(virtuabotix.com)

*Completing **Your SEF** - Engagement With Parents.*

(teachingtimes.com)

Բացի այդ, ոչ միայն այդ ձևն է սկսել ակտիվ կիրառվել, այլև *yourselvis* ձևը ևս դարձել է հաճախ գործածվող տարատեսակ՝

*Let it go baby be **yourselvis**.*

(urbandictionary.com)

Սոցիալական մեդիայում դերանվան ամենատարածված գրելաձևի տնտեսունը համարվում է օգտատերերի կողմից միավանկ անձնական *you*-ի փոխարեն համանուն *u* տառի կիրառումը: Հետագայում առաջացան *u* տառով դերանվանական նոր տարատեսակներ՝ *your-ur*, *yourself-urself*, *yourselves-urselves* և այլն:

Stop it y do u just sit there full of regrets and wishes?

Hmmm day dreaming! Don't u knw dat

(quora.com)

Սակայն առջանց համայնքներում օգտատերերի կողմից մեծ հաճախակա-նությամբ կիրառվում են նաև *you* դերանվան փոխարեն *yo* տարբերակը՝

Yo Are So Sweet Babu.. Love You .. Love You So Much.

Yo are big true.

YO!!! few more hours to go! seeyah! :) dont be late!

(Facebook.com)

Առջանց հաղորդակցման ընթացքում գրուցակիցների կողմից ամենահաճախ կիրառվող լեզվական վարիացիան / անձնական դերանվան փոքրատառով գրելաձևն է: Անշուշտ, լրացուցիչ ստեղծ չկիրառելու գործոնն է նպաստում առջանց հաղորդակցման հայեցակերպում այս լեզվական շեղման մասսայակա-նացմանը:

Այսպիսով պարզ է դառնում, որ առցանց հաղորդակցման ընթացքում անձնական և անդրադարձ դերանունների ուղղագրական շեղումները պայմանավորված են նախ և առաջ ավելի դյուրին և արագ հաղորդակցվելու գործառույթով:

Շարահյուսական շեղումներ

Առցանց հաղորդակցման միջավայրում դերանվանական միավորների տնտեսումը չի սահմանափակվում միայն լեզվի ուղղագրական մակարդակում փոփոխականների կիրառմամբ: Դերանվանական փոփոխականների մի շարք օրինակներ առկա են նաև առցանց հաղորդակցման լեզվի շարահյուսական մակարդակում:

Ժամանակակից անգլալեզու սոցիալական մեդիայում անձնական և անդրադարձ դերանունների էրզոնոմիան փոփոխությունների է ենթարկում օգտատերերի կողմից կիրառվող նախադասությունների, բառակապակցությունների գլխավոր և երկրորդական անդամների հիմնական գործառույթները և նրանց միջև առկա փոխհարաբերությունները:

Նախադասությունն իբրև շարահյուսական կառույց ձևավորվում է ենթակաստորոգյալ կապակցության հիմքի վրա (Հարությունյան 1980:39): Սակայն, առցանց հարթակում օգտատերերի կողմից միտում է նկատվում անձնական դերանուններով արտահայտված ենթակաների սղմամբ նախադասությունների ակտիվ կիրառության օրինակներ՝

Walked into a store yesterday&saw..this. The place has some really great shit!

Get Stopped by the Police? There's an App for That: #BlackLivesMatter

Stopped by city hall. nd there it is #buttonproj still powerful. No dustin needed.

Just walked the dog.....needless to say my face feels like a stick of butter that's been in the freezer for 3 hours # LouisianaWeather.

(twitter.com)

Առցանց շփման ընթացքում օգտատերերը համադասությամբ հարաբերակցվող մեկից ավելի բաղադրիչ նախադասությունները չեն ձևավորում առանձին ենթակաստորոգյալ կապակցության հիմքի վրա: Մինևույն անձնական դերանվամբ արտահայտված ենթականերից առաջինը բաղադրիչ նախադասություններից մեկում սղվում է՝ կրկնությունից խուսափելու նպատակով.

@taraduffy lolol I know!!!! Enjoy tonight bubs don't think I can make it :(zxx

Bummer, don't think I can make it all the way to the yard tonight. Just enough:)

I'm disappointed in love — dont know if i can help you

Առջանց հարթակում օգտատերերի կողմից բարդ ստորադասական և հաճախասական նախադասություններում քարացած կառույցների կիրառումը շատ հաճախ կատարվում է հապավումների միջոցով, ինչպես

***Idk** why but something about people that get too comfortable around me too fast makes me uncomfortableRT and I'll give you all my love and virtual hugs.*

*I love you all **idk** how many time I've said this today but love you nd BTS ofc...*

*Decided **id** put up a little something for ye since ye are amazing and its nearly my second christmas with ye*

(www.twitter.com)

Ժամանակակից անգլալեզու սոցիալական ցանցերում մեր կողմից կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս նաև, որ օգտատերերն իրենց նախադասությունները կառուցում են ենթակա-ստորոգյալ կապակցության հիմքի վրա, սակայն նախադասության այս երկու անդամները կիրառվում են միասնաբար առանց հստակ առանձնացման, ինչպես նշված օրինակներում.

*@yeah_kobby herh **Isee** u keep jack!!*

*@ConfusedSoull "Lylylaa" song comes to my mind everytime **isee** your name*

*@DedeOutDetGrove **Ithink** they gone have to work around MY schedule...*

*@AronsThoughts @IMPACTWRESTLING maybe itl be good **idunno** just not the lipstick be the rest of it **ican** see being funny*

*Edgar: "You see, there are more girls here than grains of sand out there. **Ican't** keep track of 'em all!" #FFVI*

(twitter.com)

Այսպիսով կարելի է պնդել, որ առջանց հարթակում օգտատերերի կողմից անձնական և անդրադարձ դերանունների՝ լեզվի շարահյուսական մակարդակում փոփոխակների կիրառումը նպաստում է նախադասությունների գլխավոր և երկրորդական անդամների միջև նոր ձևաչափի փոխհարաբերությունների զարգացմանը:

Ձևաբանական շեղումներ

Օգտատերերի կողմից առջանց հաղորդակցման լեզվի ձևաբանական մակարդակում նույնպես մեծ ինտենսիվությամբ կիրառվում են դերանվանական փոփոխակներ:

Ժամանակակից անգլալեզու սոցիալական մեդիայում կիրառվող լեզվի ձևաբանական մակարդակում անձնական և անդրադարձ դերանունների փոփոխակների առաջացումը պայմանավորված է մի շարք ներլեզվական և արտալեզվական գործոններով, ինչպես՝ լեզվական ինտերֆերենցիան, լեզվական նոր իրողությունների առաջացումը, հարակից լեզուների ազդեցությունը, լեզվական միավորների տնտեսումը և այլն:

Առջանց սոցիալական հարթակում ձևաբանական լուրջ փոփոխությունների են ենթարկվում անգլերենի անդրադարձ դերանունները: Այդ փոփոխությունները մի կողմից պայմանավորված են արագ գրելաձևի գործառնությամբ, իսկ մյուս կողմից լեզուն տանում են դեպի պարզեցում լեզվում թվի կատեգորիայի հավասարեցում:

Արդեն իսկ մեջբերված օրինակներում, կարելի է տեսնել անդրադարձ դերանունների հոգնակի կիրառությունների մի շարք օրինակներ, առանց հոգնակիակերտ վերջածանցների: Այս համատեքստում, կարևոր է նաև նշել այն, որ ժամանակակից անգլալեզու սոցիալական մեդիայում նույնպես նկատվում են անդրադարձ դերանունների խնդիր ստացական դերանուններով կազմված այլաձև կիրառություններ.

*Psychiatrist said the killer will somehow insert **themselves** into the investigation...*

*One thang bout my lil brother, I'm da CEO but he made **hissself** a boss.*

*This episode is one of my fav, it makes me so happy because they take care of **theirselves**!*

*The one person who will never leave us, whom we will never lose, is **ourself**"*

Sunday #EXPRESS #fronton agape: "brenxit Usself Festive Ginshop Bonanza"

*I hate professors that have a heavy accent. Not tryna be offensive but it sucks when students have to constantly ask them to repeat **themself**.*

(twitter.com)

Առջանց տարբեր սոցիալական հարթակներում մեր կողմից կատարված դիտարկումները ցույց են տալիս, որ զրուցակիցները փորձում են հստակորեն տարբերակել եզակի և հոգնակի you անձնական դերանվան տարատեսակները: Ընդհանուր առմամբ *ye, yez, youze* դերանվանական տարատեսակները կիրառվում են հոգնակի *դուք - you* դերանունը շեշտադրելու նպատակով.

*@clyrodebiff **Youze** must have been there at the same time as Linda & me!*

*@TimelessKate *Clicks my talons together excitedly* Ooo! Yez! I wouldz! Yup!*

*Whenz **youze** going?*

*Decided id put up a little something for ye since ye are amazing and its nearly my second christmas with **ye**...*

*After several recommendations, I started watching "The Crown." **Youze** guys were right!*

(twitter.com)

Առջանց լեզվի ձևաբանական մակարդակում հաջորդ լեզվական շեղումը անձնական դերանուններով արտահայտված ենթակաների փոխակերպումն է ստացական դերանունների, ինչպես՝

*Yesssssssssss **him** work hard for **him** money.*

*Today **me** go to the pagoda ☺ ☺ ☺ #Cut*

***Me**, trying to impress my crush even though I'm rubbish at dance moves #dremstuff.*

(twitter.com)

Առջանց հաղորդակցման միջավայրում անգլերենը որպես օտար լեզու կիրառող անձինք լեզվի ձևաբանական մակարդակում ներմուծում են բազմաթիվ լեզվական նորարություններ և շեղումներ, որոնք հիմնականում մայրենի լեզվի ինտերֆերենցիայի արդյունք են, ինչպես՝

*Everybody was asked to pay **their** bills. Everybody was asked to pay **his** bills.*

*Our family's hotel room is next to **their's** hotel room. Our family's hotel room is next to **theirs** (hotel room).*

*I wish I **was** there. I wish I **were** there.*

(quora.com)

Մեջբերված դերանվանական շեղումների օրինակներից պարզ է դառնում, որ ժամանակակից անգլերենի անձնական և անդրադարձ դերանունների փոփոխակների կիրառություններն առջանց լեզվի ձևաբանական մակարդակում մի կողմից ներմուծում են լեզվական և լեզվագործաբանական նոր իրողություններ, իսկ մյուս կողմից լեզուն տանում դեպի պարզեցում:

Եզրակացություն

Այսպիսով, ամփոփելով սույն հոդվածում ներկայացվածը՝ կարող ենք պնդել, որ հասարակական երևույթ համարվող մարդկային լեզուն անընդհատ փոփոխվում, զարգանում է՝ կախված բազմաթիվ ներլեզվական և արտալեզվական գործոններից: Լեզվի զարգացումը և փոփոխումը տեղի է ունենում աստիճանաբար, ժամանակի ընթացքում: Փոփոխությունները լեզվում, առաջ են բերում քերականական կառույցների և լեզվական երևույթների կիրառությունների նոր այլընտրանքային ձևեր, շեղումներ, որոնք ժամանակին զուգընթաց լեզվից դուրս են մղում նախկինում կիրառելի, բոլորի կողմից ընդունելի համարվող և լեզվի կառուցվածքային բոլոր մակարդակներում (ուղղագրական, շարահյուսական, բառակազմական, քերականական և այլն) առկա լեզվական նորմերը:

Հաղորդակցման այս նոր միջավայրը նոր առաջնայնություններ է ստեղծել գիտության տարբեր ուղղություններով զբաղվող գիտնականների համար: Անգլերենը, կիրառվելով առջանց միջավայրում, որպես լինգուա ֆրանկա, մեծ ինտենսիվությամբ և հաճախականությամբ նպաստում է բազմաթիվ նոր լեզվական և լեզվագործաբանական երևույթների առաջացմանը: Ժամանակակից անգլալե-

զու սոցիալական մեդիայում այդ լեզվական երևույթների շարքում մեծ կարևորություն ունի լեզվական շեղումների և փոփոխականների կիրառման ուսումնասիրությունը:

Առջանց լեզվի փոփոխականների ուսումնասիրության շարքում իր ուրույն տեղն ունեն օգտատերերի կողմից դերանվանական շեղումների կիրառությունները, քանի որ դրանք համարվում են լեզվի մեջ համեմատաբար լեզվապահպանողական հատկություն ունեցող միավորներ: Եթե հիմնվենք լեզվի տարժամանակյա ուսումնասիրությունների արդյունքների վրա, ապա կտեսնենք, որ հատկապես անձնական և անդրադարձ դերանունները շատ քիչ փոփոխությունների են ենթարկվել հարյուրամյակների ընթացքում, բացառությամբ խոնարհման և վերջավորությունների անհետացման հետ կապված փոփոխությունների: Սակայն վերջին տարիներին առջանց միջավայրում անձնական և անդրադարձ դերանունների ակտիվ կիրառումը լեզվի շարահյուսական, ձևաբանական, ուղղագրական և այլ մակարդակներում նպաստել են անձնական և անդրադարձ դերանունների նոր տարատեսակների առաջացմանը: Առջանց հարթակում այդ տարատեսակների առաջացումը պայմանավորված է մի շարք գործոններով, մասնավորապես լեզվական միավորների տնտեսմամբ, լեզվական ինտերֆերենցիայով, հարակից լեզուների ազդեցությամբ և այլն:

Սույն հոդվածում մեր կողմից քննարկված խնդիրները հնարավորություն են տալիս կատարել ևս մեկ կարևոր եզրակացություն փոփոխականներն ունեն երկակի կիրառումներ, այսինքն որոշ դեպքերում հավասարապես են կիրառվում, և ավանդական ձևի կիրառումն առայժմ դոմինանտ է, և կան դերանուններ, որոնց փոփոխակները հավասար կիրառման հաճախականություն են դրսևորում, մասնավորապես, *you* և *u* ձևերը հավասարաչափ են կիրառվում սոցիալական մեդիա հարթակներում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հարությունյան, Հ. (1980) *Ենթակայի և ստորոգյալի կապակցության հարցի շուրջ*: Լրաբեր գիտական հոդվածների ժողովածու, N 40. Երևան: Լրաբեր հասարակական գիտությունների:
2. Bauer, L.; Trudgill, P. (2011) *Language Myths*. London: Penguin.
3. Crystal, D. (2008) *Txtng: The gr8 db8*. Oxford: OUP.
4. Giles, H.; Coupland, N.; Coupland, J. (1991) *Accommodation Theory: Communication, context and culture*. Tucson: University of Arizona Press.
5. Michael, L. (2005) *Social Dimensions of Language Change*. California: University of California-Berkeley.
6. Rana, S.; Moh, O.K. (2011) *Sex as an Independent Variable Related to Linguistics Variables*: 2011 International Conference on Languages, Literature and Linguistics vol.26. Singapore: IACSIT Press.
7. Silverstein, M. (1985) *Language and Culture of Gender: At the Intersection of Structure, Usage, and Ideology*. Orlando: Academic Press.
8. Vincenteni, A. (2003) *The Economy Principle of Language*. Milan: Università di Milano.

9. Карташева, Е.А. (2011) *Внешние и внутренние причины изменения и развития языка: Сборники конференций ниц социосфера*. Прага: Vedecko Vydavatelске Centrum Sociosfera.

ԳՐԱԿԱՆ ԱՐՁՅՈՒՐՆԵՐ

1. *Social Media Material*. Available at: <<https://m.facebook.com/home.php>> [Accessed January 2017].
2. *Social Media Material*. Available at: <<https://twitter.com>> [Accessed January 2017].
3. *Social Media Material*. Available at: <<https://www.quora.com>> [Accessed December 2017].
4. *Urban Dictionary*. Available at: <www.urbandictionary.com> [Accessed January 2017].
5. *Social Media Material*. Available at: <<https://www.virtuabotix.com>> [Accessed January 2017].
6. *Social Media Material*. Available at: <www.teachingtimes.com> [Accessed December 2016].

Social Media as a Basis of Language Variation and Change

The following article focuses on the study of personal and reflexive pronoun variations and their change in contemporary English social media from morphological, syntactical and other perspectives. In contemporary English social media personal and reflexive pronoun deviations occur due to different linguistic and extralinguistic factors, amongst which linguistic economy, linguistic interference and the influence of other languages are of paramount importance. All these linguistic and extralinguistic factors of language change and variation have the tendency to extend the usage of personal and reflexive pronouns and result in structural simplification of modern English.

Социальные медиа как основа изменений языка и лингвистических отклонений

Данная статья посвящена изучению причин языковых изменений, а также вариаций личных и возвратных местоимений, которые усиливают роль социальных медиа в контексте формирования этих изменений. Лингвистические отклонения обусловлены многочисленными факторами, среди которых первичным является языковая экономия и влияние других языков. На платформе онлайн-общения эти вариации происходят на всех уровнях языка: орфографическом, грамматическом, семантическом и т.д. Все эти лингвистические и экстралингвистические факторы изменения языка и вариации имеют тенденцию расширения функциональных возможностей личных и возвратных местоимений и упрощения структуры современного английского языка.